ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ՝ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 91-րդ հոդվածի 7-րդ մասը՝

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1) հարցի քննարկման տևողությունը սահմանել մինչև 90 րոպե.

2) հիմնական ելույթի համար հատկացնել մինչև 15 րոպե.

3) հիմնական և յուրաքանչյուր հարակից զեկուցողին հարցեր տալու համար սահմանել հետևյալ ժամանակացույցը.

ա. հարցերի համար՝ մեկական րոպե,

բ. հարցերին պատասխանելու համար՝ երկուական րոպե,

գ. հարցերին և պատասխաններին արձագանքելու համար՝ մեկական րոպե.

4) գլխադասային հանձնաժողովի ներկայացուցչի՝ հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար հատկացնել մինչև 5 րոպե.

5) հայտ ներկայացնելու դեպքում՝ խմբակցությունների մեկական ներկայացուցիչների ելույթի համար հատկացնել մինչև 5 րոպե.

6) մտքերի փոխանակության համար հատկացնել մինչև 3 րոպե.

7) մտքերի փոխանակությունն ավարտել հիմնական զեկուցողի՝ մինչև 5 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով.

8) մտքերի փոխանակությունն ավարտվելուց հետո հայտարարել նախագծի քննարկման ընդմիջում մինչև 3 օր՝ նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկներ ներկայացնելու համար:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

2022 թվական, դեկտեմբերի 9

Երևան

ԱԺՈ - 344 - Լ